

ՀՀ Կառավարության առջնթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ռ Ո Շ ՈՒ Մ 58/5

28 դեկտեմբերի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 18.12.2012թ-ի նիստում քննության է առնվել քաղաքացի Վահագն Շառոյանի 12.12.2012թ. վարչական բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 10.12.2012թ. թիվ 1410963 վարչական ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ վարչական ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես:

քաղաքացի Վահագն Շառոյանի վարչական բողոքում մասնավորապես նշված է:

10.12.12թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ կողմից կազմվել է հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410963 վարչական ակտը: Վարչական ակտում խախտման նկարագրության մեջ գրված է հետևյալը: <քաղաքացի Շառոյանը 2011-2012թթ. ընթացքում իրականացրել է ձեռնարկատիրական գործունեություն չունենալով համապատասխան պետական գրանցում, իրացրել է <Մալյան Փրոդաքչն> ՍՊԸ-ից ստացված թվով 89 ավիատոմ՝ Երևան-Դուբայ-Երևան չարտերային ավիաչվերթի համար>:

Ակտի հետ համաձայն չեմ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն, ձեռնարկատիրական գործունեություն է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գոյց օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Իրականում ես նման գործունեություն չեմ ծավալել: Այսպես:

Ավիատոմների անմիջական վաճառքն իրականացրել է <Մալյան Փրոդաքչն> ՍՊԸ-ն, որի մասին յուրաքանչյուր տոմսի վրա առկա է պարտադիր նշագրում տոմսը վաճառող ավիագործակաի մասին: Նշեմ ավելին, ֆիզիկական անձը առանց համապատասխան պետական գրանցման և առանց ավիաընկերության հետ կնքված պայմանագրի հնարավորություն չունի միանալ ավիաընկերության համակարգին և իրականացնել ավիատոմների վաճառք:

Ես միայն բանավոր պայմանավորվածության հիման վրա գրավել եմ <Մալյան Փրոդաքչն> ՍՊԸ համար ուղևորներ ներգրավելու աշխատանքներով: Իմ ներգրաված յուրաքանչյուր ուղևորի համար ինձ պետք է վճարվեր պարզեավճար: <Մալյան Փրոդաքչն> ՍՊԸ-ն օրենքով սահմանված կարգով, որպես հարկային գործակալ, պարտավոր էր պահել եկամտահարկը, որից հետո ինձ վճարեր գումար: Նշեմ նաև, որ ընկերության կողմից այդպես էլ չի վճարվել կատարված աշխատանքների դիմաց որևէ գումար: Այդ փաստի վերաբերյալ ես արդեն գրավոր հայտնել եմ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցներին: Հավելեմ նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցների կողմից ինձ չի ներկայացվել և ակտին չի կցվել որևէ փաստաթուղթ, որը կվկայեր այն մասին, թե ես վճարել եմ տոմսերի դիմաց, կամ ձեռք եմ բերել տոմսեր: Զկա նաև ոչ մի ավիատոմ, որի վրա որպես տոմսի վաճառող նշված լինի իմ անունը:

Համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի, վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացված տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակ չի ապացուցել: Բացի այդ, համաձայն նոյն օրենքի 43-րդ հոդվածի՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը:

Հաշվի առնելով վերոգրյալ գտնում եմ, որ իմ գործողություններում բացակայում են ձեռնարկատիրական գործունեության հատկանիշները, ուստի խնդրում եմ անվավեր ճանաչել 10.12.12թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ թիվ 1410963 վարչական ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Վահագն Շառոյանի ներկայացուցիչ և արձանագրությունը կազմած պահտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացուցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 10.12.2012թ. թիվ 1410963 վարչական ակտի (այսուհետ՝ վարչական ակտ) կայացման համար հիմք է հանդիսացել ՀՀ ԱԱԾ քննչական վարչության ավագ քննիչ Ա.Սողոմոնյանի 25.09.2012թ-ի որոշումը: Մասնավորապես, կատարված քննությունից պարզվել է, որ քաղաքացի Վահագն Շառոյանը 2011թ. դեկտեմբեր ամսին բանավոր պայմանավորվածության գալով <Մալոյան Փրոդաքչն> ՍՊԸ անօրեն Վիկտորյա Մալոյանի հետ իրականացրել է ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն, որի ընթացքում ստացել է 4966.7 հազ. դրամի եկամուտ, այն է՝ իրացրել է թվով 89 ավիատոմսեր Երևան-Դուբայ-Երևան չարտերային չվերթների ուղղությամբ: Յուրաքանչյուր տոմսի վաճառքից Վահագն Շառոյանն ակնկալել է ստանալ 67.0 հազ. դրամ եկամուտ կամ ընդամենը 5963.0 հազ. դրամ:

Վահագն Շառոյանի համախառն եկամտի չափը որոշելիս հաշվի է առնվել այն հանգամանքը, որ <Մալոյան Փրոդաքչն> ՍՊԸ նկատմամբ կազմված ակտով եկամտահարկի մասով լրացուցիչ գանձման է առաջադրվել 596.3 հազ. դրամ, ինչպես նաև այն, որ Վահագն Շառոյանն իր տրված ցուցունքներում նշվել է, որ գործունեության ընթացքում գրասենյակի վարձակալության համար վճարել է 400.0 հազ. դրամ վարձավճար: Արդյունքում Վահագն Շառոյանի համախառն եկամուտը կազմել է 4966.7 հազ. դրամ, որի նկատմամբ կիրավվել է <<արկերի մասին> <<օրենքի 26-րդ հոդվածով սահմանված տուգանքը՝ գումարով 2483.4 հազ. դրամ:

Վարչական ակտով լրացուցիչ գանձման է առաջադրվել նաև <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> <<օրենքի 11-րդ հոդվածով սահմանված տուգանքը՝ գումարով 496.7 հազ. դրամ:

<< քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն, <Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ոիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գոյց օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է>:

Քննարկվող դեպքում <<ԱԱԾ քննչական վարչության ավագ քննիչի 25.09.2012թ-ի որոշման համաձայն, Վահագն Շառոյանը բանավոր պայմանավորվածության գալով <Մալոյան Փրոդաքչն> ՍՊԸ տնօրենի հետ իրականացրել է ավիատոմսերի վաճառք և ստացել է 4966.7 հազ. դրամի եկամուտ: Ընդ որում, այդ գործունեության իրականացման համար Վահագն Շառոյանը վարձակալել է գրասենյակային տարածք, որի դիմաց վճարել է 400.0 հազ. դրամ վարձավճար:

Հանձնաժողովը գտնում է, որ Վահագն Շառոյանի իրականացված գործունեությունը համապատասխանում է << քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածով սահմանված ձեռնարկատիրական գործունեության ընութագրին, այն է՝ Վահագն Շառոյան ինքնուրույն, իր ոիսկով իրականացրել է ավիատոմսերի վաճառքի գործունեություն, որի հիմնական նպատակը հանդիսացել է աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալը:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, <Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագիծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ենելով քննարկման արդյունքներից և նեկավարվելով <<արկային ծառայության մասին> <<օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո բ ո 2 ու մ է՝

Վարչական ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի դեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:



Հանձնաժողովի նախագահ՝

Տ. ԲԱՐՍԵՂՅԱՆ